ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*HESED*)
SPECIAL TOPIC: LOVINGKINDNESS (*HESED*)

Այս տերմինը բազմանշանակ է: BDB այս բառն այսպես է բնութագրում (338-339).

Ա. Կիրառված մարդկանց հետ կապի վերաբերյալ՝
1. բարեգթություն ընկերների հանդեպ (օր.՝ 1 Թագ. 20:14, 2 Մնաց. 24:22)
2. բարեգթություն աղքատի և կարիքավորի հանդեպ (օր.՝ Միքիա 6:8)
3. սիրային կապ (տես՝ Երեմ. 2:2, Ովս. 6:4)
4. վայելչություն (տես՝ Եսայի 40:6)

Բ. Կիրառված Աստծո կապի վերաբերյալ՝
1. ուխտի հավատարմության և սիրո համար
   ա. «թշնամիներից և վտանգներից փրկվելիս» (օր.՝ Երեմ. 31:3, Եզրաս 27:28, 9:9)
   բ. «կյանքը մահից պաշտպանելիս» (օր.՝ Հոբ 10:12, Սաղմ. 86:13)
   գ. «հոգևոր կյանքի արթնության» համար (օր.՝ Սաղմ. 119:41,76,88,124,149,150)
   դ. «մեղքից փրկելիս» (տես՝ Սաղմ. 25:7, 51:3)
   ե. «ուխտերը պահելիս» (օր.՝ 2 Մնաց. 6:14, Նեեմ. 1:5, 9:32)
2. նկարագրում է որպես աստվածային բնավորության գիծ (օր.՝ Ելից 34:6, Սաղմ. 86:15, 103:8, Նեեմ. 9:17, Հովել 2:13, Հովնան 4:2, Միք. 7:20)
3. Աստծո գթությունը՝
   ա. «առատ» (օր.՝ Թվ. 14:18, Նեեմ. 9:17, Սաղմ. 86:5, 103:8, 145:8, Հովել 2:13, Երեմ. 4:2)
   բ. «անսահման» (օր.՝ Ելից 20:6, 2 Օր. 5:10, 7:9)
   գ. «հավիտենական» (օր.՝ 1 Մնաց. 16:34,41, 2 Մնաց. 5:13, 7:3,6, 20:21, Եզրաս 3:11, Սաղմ. 100:5, 106:1, 107:1, 118:1,2,3,4,29, 136:1-26, 138:8, Երեմ. 33:11)
   դ. ամրոցի պես է (օրինակ՝ Սաղմ. 59:17)
   ե. կապված է Աստծո զորության հետ (օրինակ՝ Սաղմ. 62:11գ-12ա)
4. գթության գործերը (օր.՝ 2 Մնաց. 6:42, Սաղմ. 89:2, Ես. 55:3, 63:7, Ողբ 3:22)

Այս բառը անգլերեն թարգմանություններում շատ տարբեր կերպերով է ներկայանում: Կարծում եմ լավագույն ամփոփիչ սահմանումը կարող է հանդիսանալ «Աստծո առանց տողատակերի ուխտի հավատարմություն» խոսքը: Այն համազոր է ՆԿ-յան «սեր» (*agapaō*) տերմինին: Աստված հավատարիմ է և սիրառատ Իր էության շնորհիվ: